ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 103
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքը (Արմավիր քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Արմավիր համայնքի (Արմավիր քաղաքի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքը (Արմավիր քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արմավիր-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի (Արմավիր քաղաքի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
0.71 հա մակերեսով հողամասից 0.099 հա (կադաստրային ծածկագիրն ըստ վկայականի՝ 04-043-460-015, ըստ կադաստրային քարտեզի՝ 04-001-0547-0003 և 01-001-0547-0004) մակերեսով բնակավայրի նպատակային նշանակության այլ հողեր	0.71 հա մակերեսով հողամասից 0.099 հա (կադաստրային ծածկագիրն ըստ վկայականի՝ 04-043-460-015, ըստ կադաստրային քարտեզի՝ 04-001-0547-0003 և 01-001-0547-0004) մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների՝ արդյունաբերական օբյեկտների հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Արմավիր համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Արմավիր համայնքի (Արմավիր քաղաքի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի (Արմավիր քաղաքի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝ Կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող		
		Դ.Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «05» «մարտի» 2024 թ.